Արձանագրություն N 14
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կարիքների համար համակարգչային սարքավորումների գնման «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «_12_» «_մարտի_» 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Նելսոն Զուլոյան
Հանձնաժողովի անդամներ	Ալբերտ Մուրադյան,
	Մանյա Մխիթարյան
Հանձնաժողովի քարտուղար	Աննա Հարությունյան

1. ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի անցկացման հիմքը.

(Ն.Զուլոյան)

1.1 ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում նախատեսված համակարգչային սարքավորումների գնման ֆինանսավորումը ապահովելու նպատակով 2018թ-ի փետրվարի 8-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել թիվ /ԼԱ/06/1460-18 գրությունը՝ «2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու ու ՀՀ առողջապահության նախարարությանը գումար հատկացնելու, ինչպես նաև գույք նվիրաբերելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ: 2018թ-ի փետրվարի 28-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է պատասխան գրությունը, որտեղ նշված է, որ գնման գործընթացն իրականացվելիս չեն պահպանվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, քանի որ ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ հայտի ապահովումը ներկայացվի միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, այնինչ ընթացակարգի 1-3 չափաբաժինների նախահաշվային գները գերազանցում են գնումների բազային միավորի յոթանասունապատիկը: Ելնելով վերոգրյալից՝ ֆինանսական միջոցներ նախատեսելու

հարցին հնարավոր կլինի անդրադառնալ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան նոր գնման գործընթաց իրականացնելու դեպքում:

2. Հանձնաժողովը որոշեց՝

(Ն.Զուլոյան)

2.1 «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով ընթացակարգը 1-3 չափաբաժինների գծով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

2.2 Հաստատել «ՀՀԱՆ-ԱԾԻԳ-ԲՄԱՊՁԲ-2017/01» ծածկագրով ընթացակարգի՝ 1-3 չափաբաժինների գծով չկայացման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Նելսոն Զուլոյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ալբերտ Մուրադյան

_____ Մանյա Մխիթարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Հարությունյան